



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՅԱՅՈՅ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԿԸ ՀԱՆԴԻՍԱԴԵՏԵ
Ս. ԿԱՐԱԴԵՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

Կիրակի, 27 Օգոստոսին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Սուշեղ Արք. Մարտիրոսեան պիտի հանդիսապետե Յուլիվուտի Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ Ս. Պատարագին եւ պիտի փոխանցէ օրուան Աւետարանի խորհուրդը ներկայացնող պատգամ մը:

Յայտնենք որ կարճատեւ այցելութեամբ Թեմս կը գտնուին Միացեալ Նահանգներու Արեւելեան Թեմի Առաջնորդ բարձր. Ս. Օշական Արք. Չոլոյեան եւ Բերիոյ Թեմի նախկին Առաջնորդ բարձր. Ս. Սուրեն Արք. Գաթարոյեան:

Նոյն օրը, Թեմիս Առաջնորդ Սրբազան հօր հրաւերով, Օշական Արքեպիսկոպոսը պիտի հանդիսապետե Էնսիւնոյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ Ս. Պատարագին եւ պիտի տայ օրուան խորհուրդը վեր առնող քարոզ մը, իսկ Սուրեն Արքեպիսկոպոսը պիտի հանդիսապետե Ս. Աստուածածին եկեղեցւոյ Ս. Պատարագին եւ պիտի տայ քարոզ մը:

PRELATE TO PRESIDE OVER SERVICES AT
ST. GARABED CHURCH

On Sunday, August 27, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Holy Mass at St. Garabed Church in Hollywood, and deliver his sermon.

We would also like to announce that H.E. Archbishop Oshagan Choloyan, Prelate of the Eastern Prelacy, and H.E. Archbishop Suren Kataroyan, former Prelate of the Diocese of Aleppo, are briefly visiting our Prelacy. Upon the invitation of the Prelate, Archbishop Choloyan will preside over Mass at Holy Martyrs Church in Encino and deliver his sermon, while Archbishop Kataroyan will preside over services and deliver his sermon at St. Mary's Church in Glendale.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆՆ ՈՒ ԱԶԳ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
Կ'ԱՅՑԵԼԵՆ ԾԽԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ

Առաջնորդ Սրբազան հօր նախազահուութեամբ, Ազգային Վարչութիւնը կը շարունակէ իր հերթական հանդիպումները ունենալ ծխական շրջաններու հոգեւոր հովիւներուն եւ հոգաբարձական կազմերուն հետ:

Այս ծիրէն ներս, Երեքշաբթի, Օգոստոս 15-ին, Առաջնորդ Սրբազանն ու Ազգ. Վարչութիւնը հանդիպում ունեցան Էնսիւնոյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ հովիւին եւ հոգաբարձութեան հետ, իսկ Երեքշաբթի, Օգոստոս 22-ին, հանդիպում

մը կայացաւ Զոլիվուտի Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ հովիւին եւ հոգաբարձութեան հետ: Զննարկուեցան ծխական այս շրջաններու աշխատանքներուն ընթացքն ու Ազգ. Առաջնորդարանին հետ գործակցութեան կապուած հարցեր:

PRELATE AND EXECUTIVE COUNCIL MEET WITH PARISH PASTORS AND BOARD OF TRUSTEES

The Prelate and the Executive Council continue their meetings with the Pastors and Board of Trustees of our parishes.

On Tuesday, August 15, the Prelate and Executive Council members met with the Pastor and Board of Trustees of Holy Martyrs Church in Encino, and on Tuesday, August 22nd with the Pastor and Board of Trustees of St. Garabed Church in Hollywood.

ՄՈՒՍԱ ԼԵՐԱՆ ԶԵՐՈՍԱՄԱՐՏԻՆ ԱՌԻԹՈՎ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՄԱՏԱՂՕՐՅՆԷՔ ՖՐԵՉՆՈՅԻ ՄԷՋ

Մուսա Լերան հերոսամարտի 91-ամեակին առիթով, Կիրակի, Սեպտեմբեր 3-ին, Ֆրեզնոյի մէջ տեղի պիտի ունենայ Ս. Պատարագ, մատաղօրհնէք եւ տօնակատարութիւն:

Առաջնորդ Սրբազան հօր տնօրինումով, Գերպ. Տ. Միւռն Ծ. Կրդ. Ֆրեզնոյի մէջ Ս. Պատարագ պիտի մատուցանէ, պիտի քարոզէ, ու կատարէ մատաղօրհնէքի արարողութիւնը:

HOLY MASS AND OFFERING OF BLESSINGS IN FRESNO COMMEMORATING THE 91ST ANNIVERSARY OF THE HEROIC BATTLE OF MOUSA DAGH

On Sunday, September 3rd, the Mousa Dagh Compatriotic Union will commemorate the 91st anniversary of the heroic battle of Mousa Dagh in Fresno with Holy Mass, offering of the blessings (madaghorhnek), and festivities.

The Prelate delegated Very Rev. Fr. Muron Aznikian to conduct Holy Mass, deliver his sermon, and preside over the blessing of madagh.

ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԸ ԼԾՈՒԻ

Հինգշաբթի, 24 Օգոստոսի երեկոյեան, Ազգային Առաջնորդարանի Միջ-եկեղեցական աշխատանքներու կորակազմ Յանձնախումբը գումարեց իր առաջին ժողովը, Ազգային Առաջնորդարանի առժամեայ գրասենեակին մէջ, Էնսիսօ,

Նախագահությամբ Թեմիս Առաջնորդ Սրբազան Զոր: Ներկայ էին Գերպ. Ս. Միւռն Օ. Կրդ. Ազնիկեան, Օր. Վանա Կիտցիսեան, Օր. Բալիկ Պապեան, Տեարք Րաֆֆի Քիւրքճեան, Շահէ Բէշիշեան եւ Արա Տէր Յարութիւնեան:

Առաջնորդ Սրբազանը բացումը կատարեց ժողովին ու ընդհանուր գիծերու մէջ բացատրեց այս յանձնախումբին առաքելութիւնը, նշելով, որ անկա մաս կը կազմէ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ու անոր հովանիին տակ գործող թեմերու վարած միջ-եկեղեցական գործակցութեան՝ երիւմենիք աշխատանքներուն: Ան նշեց, որ այս յանձնախումբը պիտի ըլլայ Ազգ. Առաջնորդարանիս երիւմենիք աշխատանքները համադրող կազմը:

Ժողովը ատենապետ ընտրեց Օր. Վանա Կիտցիսեանը: Որոշուեցաւ, որ իւրաքանչիւր անդամ իր շրջանի ոչ-հայկական քոյր եկեղեցիներու հետ կապ հաստատէ եւ հետաքրքրուի նոյնատիպ մարմիններու մասին, որպէսզի հետագային կարելի ըլլայ ճշդել գործակցութեան ձեւերը:

Յանձնախումբին մօտ Առաջնորդ Սրբազան Զոր ներկայացուցիչն է Զայր Միւռնը:

PRELACY ESTABLISHES ECUMENICAL ACTIVITIES COMMITTEE

On the evening of Thursday, August 24, under the auspices of the Prelate, the Prelacy Ecumenical Activities Committee convened its first meeting. In attendance were Very Rev. Fr. Muron Aznikian, Ms. Vanna Kitsinian, Ms. Palig Babian, Mr. Raffi Kurkjian, Mr. Shahe Keshishian, and Mr. Ara Der Haroutounian.

The Prelate commenced the meeting, detailing the mission and responsibilities of the committee and stating that the committee will function as a part of the Ecumenical activities of the Holy See of Cilicia. The committee elected Vanna Kitsinian as Chairperson, after which it decided that each member should contact local non-Armenian sister churches, inquire about similar committees they might have, and establish ties that will be conducive to future collaboration.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՑԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ ԿՐ ՅԱՅՏՆԷ ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ԳԵՈՐԳ ԳԱՆՏԱՀԱՐԵԱՆԻ ՀԱՐԱՉԱՏՆԵՐՈՒՆ

Բազմավաստակ կրթական մշակ եւ խմբավար, նուիրեալ դաստիարակ, մեր եկեղեցւոյ անձնդիր նուիրեալ եւ ազգային-հասարակական գործիչ Գեորգ Գանտահարեան իր մահկանացուն կէսքեց Հինգշաբթի, Օգոստոս 17-ին, Պէյրուսի մէջ, Լիբանան:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազան Զայրը Թեմիս Կրօնական Ժողովին, Ազգ. Կարչութեան եւ Ժողովականութեան անունով, նամակով մը իր ցաւակցութիւնը յայտնած է հանգուցեալի այրիին եւ ընտանեկան հարազատներուն:

PRELATE EXPRESSES HIS CONDOLENCES TO THE FAMILY OF KEVORK KANDAHARIAN

On Thursday, August 17, the Armenian community mourned the loss of long-time educator Kevork Kandaharian, which occurred in Beirut, Lebanon. On behalf of the

Prelacy Religious and Executive Councils, the Prelate expressed his condolences to the family.